ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **« 21 » « 10 » 2026թ.**
ժամը 15:00

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԿՇԲ պետի պարտականությունները կատարող Ի. Սաֆարյան (հանձնաժողովի նախագահ),

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԿՇԲ առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյան (գնահատող անդամ),

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԿՇԲ ճարտարագետ Լ. Կարապետյան (գնահատող անդամ),

ՀՀ ՆԳՆ ՏՎ գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Մելքոնյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **կենցաղային ապրանքների** ձեռքբերման նպատակով հայտարարված ***ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43*** ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ ներկայացրել են **«ИП Горушин Александр Олегович»-ն և «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն:**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ **«ИП Горушин Александр Олегович»-ի** կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

«ИП Горушин Александр Олегович»-ի կողմից ներկայացված հրավերով՝

- պահանջվող փաստաթղթերը՝ Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը, Հավելված 1.1-ը՝ տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է **ներկայացնել հայերեն՝** համաձայն Գնումների մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի:
- պահանջվող փաստաթղթերում բացակայում է **Հավելված N 1.3-ը՝** իրական շահառուների վերաբերյալ կայք էջի հղումը:
- հայտում նշված չեն հետևյալ պարամետրերը՝ պտույտների արագություն և կարգավորումներ՝ 1-ին փոխանցմամբ՝ առնվազն 500պտ/ր, 2-րդ՝ առնվազն 2000պտ/ր: Հարվածների հաճախականությունը՝ առնվազն 30.000հպ/ր, մետաղական կեռիկի տրամագիծը՝ 13մմ-ից ոչ պակաս: Մոմենտի կարգավորումներ՝ առնվազն 22:

➢ նշված չէ՝ լրակազմի (կամպլեկտացիա) մեջ ներառված բաղադրիչների քանակական և տեխնիկական պարամետրերը՝

- Փայտի պատառաքաղ հորատիչներ՝ առնվազն 3 հատ (16, 19, 22 մմ),
- Քարի/բետոնի հորատիչներ՝ 3 հատ (5, 6, 8 մմ),
- HSS հորատիչներ՝ 2 հատ (4-6 մմ),
- 65 մմ հարվածային պտուտակահան բիթեր՝ 2 հատ (PH2+PH2, PH2+SL6),
- 150 մմ հարվածային պտուտակահան բիթեր՝ 1 հատ (PH2),
- Ձենկովկա (անցքի կոնաձև լայնացուցիչ)՝ առնվազն 3 հատ,
- 48 մմ մագնիսական պտուտակներ (գայկավերտի գլխիկներ)՝ 2 հատ (6-10 մմ),
- Մարտկոց՝ 1 հատ (ոչ պակաս, քան 2.0 Աժ),
- Լիցքավորիչ՝ 1 հատ (լիցքավորման լարումը՝ 220-240Վ ~ 50/60Հց):

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԸ ՈՐՈՇԵՑ՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ /1/ աշխատանքային օրով և **«ИП Горушин Александр Олегович»-ին** առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում կատարել վերոգրյալ անհամապատասխանությունների շտկումները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված 1 /մեկ/ աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
ՏՎ ԿՇԲ պետի պարտականությունները կատարող *Ի. Սաֆարյան*

Հանձնաժողովի անդամներ՝
ՏՎ ԿՇԲ առաջատար մասնագետ *Հ. Հովհաննիսյան*
ՏՎ ԿՇԲ ճարտարագետ *Լ. Կարապետյան*

Հանձնաժողովի քարտուղար՝
ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ *Ս. Մելքոնյան*